

թիւնը կ'ենթադրէ Ս. Աննայի մասունքներուն համար՝  
 զօրութիւն մը ընդդէմ կանացի հիւանդութեանց:  
 Ուխտաւորները բազմութեամբ կը յաճախէին այս մա-  
 սունքներուն և քողին: Արի եպիսկոպոսները Ս. Ան-  
 նայի քողին մէկ օրինակը շինել տուին գեղարուես-  
 տական ճաշակով մը և իսկականին ճշդութեամբ: Ուխ-  
 տաւորաց տեսածը այդ օրինակն էր: Գալով իսկական  
 քողին, դարերով պահուած էր ապակեայ շիշի մը մէջ,  
 որ վենետեան ոճի գլուխ գործոց մըն է: Զգուշական  
 միջոցներու շնորհիւ քողը շիշէն հանուեցաւ, 4.5 քա-  
 ռակուսի մէդր փամէջքի մէջ դնդակաձև ծալուած  
 լաթ մըն էր եւ դրուած փամէջքի մէջ: Արդ, այս  
 վերջին աստիճան քթանէ նուրբ քողը 3 մէդր 10 եւ  
 1 մ. 50 չափ մը ունէր: Ամենափափուկ ասեղնագոր-  
 ծութեամբ զուգահեռական երեք երկոյներ կը զար-  
 դարեն զայն: Անոնցմէ ամենալայնը մէջտեղը կազ-  
 մուած է լաւագոյն ճաշակի ոսկեայ թելերով շրջա-  
 նակներու հիւսազարդերով, երեք մետալիոններու  
 կտրուած. նմանապէս ոսկեայ թելերով զոր կը շրջա-  
 պատեն կարմիր թելերով արձանագրութիւններ՝ ուր  
 կը տեսնուին մարդեր՝ առասպելական անասուններու  
 հետ: Ուրիշ մետալիոններ՝ ուր դժուարաւ կը տես-  
 նուին թռչուններ և ծաղիկներ և զոր կը շրջապատեն  
 կապոյտ թելերով արձանագրութիւններ, աջ ու ձախ  
 երկոյնները կը զարդարեն:

Եգիպտական հիւսուածոյի մը գաղտնիք. — Ս. Ան-  
 նայի այս քողը մանրակրկիտ քննութեան ենթակուած  
 է արաբական արուեստի թանգարանին տեսուչ Wietի՝  
 գաղիացի միակ գիտունին կողմէ՝ որ կարողացաւ կար-  
 դալ արձանագրութիւնները: Այս վերջինները հին խըպ-